յակոչված է այն տարիներին Գերմանիայի արտաքին գործոց նախարար Ա. Ցիմմերմանի հետևյալ հայտարարությունը. «Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա շահերին»: Գերմանացիների ոճրագործ հովանավորության մասին բերված են հատվածներ ակադեմիկոս Ե.Տարլեի գրքերից և Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հուշագրություններից: Հեղինակները փաստագրությամբ հաստատում են նաև Անգլիայի ու Ֆրանսիայի քար անտարբերությունը հայերի ողբերգության հանդեպ, իսկ ԱՄՆ-ն մնաց սոսկ դիտողի դերում:

Անդրադառնալով հայկական ցեղասպանության ճանաչման խնդրին, հեղինակները թվարկում են միջազգային ատյանների քննարկումները և որոշումները, սկսած Սևրի պայմանագրից մինչև մեր օրերը: Առաջին դրվագով տրված է Հայոց ցեղասպանության պատմագրությունը: Հիշատակված են հայ և օտարազգի պատմաբանների աշխատությունները, որոնք հաստատում են ցեղասպանության փաստը: Նշված են թուրք և Եվրոպայի թրքամետ մի քանի պատմաբանների անունները, որոնք ջանք չեն խնայում ժխտելու հայկակա ցեղասպանությունը:

«Հայերը պահանջում են, որ մարդկությունը ընդունի իրենց ցեղասպանության փաստը և դատապարտի թուրքերի աննախադեպ ոճիրը» - այսպիսին է հեղինակների եզրակացությունը:

Հ.ԻՆՃԻԿՅԱՆ, Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը. Երևան, «Հայգիտակ» հրատ., 1995, 102 էջ

Գրքի առաջաբանը գրել է պրոֆ. Պ.Հակոբյանը, ըստ արժանվույն գնահատելով հեղինակի ծառայությունը մեր պատմագրությանը, մասնավորաբար ցեղասպանության հետ առնչվող պատմական, քաղաքական, կրոնական, ազգային, սոցիալ-հոգեբանական գործոնները լուսաբանելու խնդրում:

Հ.Ինճիկյանը բացատրում է իր այս աշխատությու-

գրելու հիմնական պատճառը. «Վիթխարի քանակությամբ բազմա-
զան գրականություն, հրապարակված փաստաթղթերի ժողովածուներ-
ի, գեղարվեստական ստեղծագործությունների առկայության դեպ-
ում սույն ոչ մեծ հետազոտության հրատարակման անհրաժեշտու-
թյունն առաջացել է հարցի նոր հայեցակետից ելնելով. այն է՝ ցույց
տալ, թե ինչպե՞ս ուխտադրժորեն, ճիզվիտական եղանակներով, հեն-
ելով զանգվածային կոտորածների բազմամյա փորձի, Ղուրանի և շա-
րիաթի դոգմերի վրա, երիտթուրքերը նախապատրաստել են երկրի
ռուսուլման զանգվածների հասարակական հոգեբանությունը և, օգ-
տագործելով համաշխարհային պատերազմի պայմանները՝ հասել ի-
մենց ազգային նպատակներին»: Եվ այնուհետև. «Երկրորդ ոչ պակաս
կարևոր հանգամանքը հայերի ցեղասպանության և ընդհանրապես
քրիստոնյա և այլ հպատակ ժողովուրդների բնաջնջման փաստի
թաքնումն է պաշտոնական Թուրքիայի կողմից»:

Հեղինակը թվարկում է այն բոլոր հնարածին միջոցները, որոնցով
թաքնում են հայերի ցեղասպանությունը: Խոսելով Գերմանիայի հան-
գավոր մեղսակցության, մեծ տերությունների անտարբերության մա-
սին, ինչը և ազատ արձակեց բարբարոսներին՝ կատարելու իրենց դի-
վային ոճիրները հայ ժողովրդի հանդեպ, նա եզրակացնում է. «Ցեղա-
սպանության դատապարտումը դարձել է բոլոր պետությունների ու կա-
ռավարությունների, համայն առաջադեմ մարդկության քաղաքական
պարտքն ու բարոյական պարտականությունը»:

«Պատմության էջերից» դրվագում Ինճիկյանը լուսաբանել է ցեղա-
սպանության առաջացման պատճառներն ու այն նախապատրաստած
գործոնները:

«Քաղաքական առումով ամբողջ ցեղերի ու ժողովուրդների, նրանց
բազմացման ու զարգացման պայմանների, նրանց մշակույթի ոչնչա-
ցումը յուրահատուկ է «թաթար-մոնղոլների, թուրքական սուլթանների,
չինական կայսրերի և այլոց նվաճողական քաղաքականությանը» (չա-
կերտների մեջ առնված վերջին ատահայտությունը քաղված է Ի.Ն.Ար-
ցիբասովի «Օրինականության սահմաններից դուրս» գրքից):

Օրինակներ բերելով գեղարվեստական և պատմագրական գրակա-
նությունից, հիշատակելով անցած դարերում աշխարհի այս կամ այն
անկյունում զանգվածային կոտորածների փաստերը, Ինճիկյանը
գտնում է, որ «... կոտորածների հայրենիքը պետք է համարել օսման-
յան կայսրությունը»: Նա այս միտքը հիմնավորում է նրանով, որ նա-

խորդ կոտորածները նսեմանում են հայերի զարհուրելի ցեղասպանության առջև թե՛ մարդկանց թվի և թե՛ ոչնչացման վայրագ եղանակների առումով: Անդրադառնալով թուրքական ցեղերի, սկսած 12-13-րդ դարերից, նվաճողական արշավանքներին ընդգծվում է, որ արյուն թափելը, սպանությունները հոգեբանություն են եղել թուրքերի համար: Այստեղից է սնվել «թուրքերի ամբարտավանությունն ու գոռոզությունը, նրանց ազգային բնավորության ամենավառ գծերը» և ապա՝ «ծածկամտությունն ու ոխակալությունը»: Թուրք մարդու հոգեկան կերտվածքի վրա, ինչպես նշում է Ինճիկյանը, մեծ ազդեցություն են ունեցել Դուրանի դոգմերը: Հետևողականորեն, քարոզների միջոցով «Օսմանյան կայսրությունում մշակել, ձևավորել ու ստեղծել էին իսլամ չդավանող անձանց, մարդկանց խմբերի, ամբողջ ժողովուրդների արժեքազրկման մի ընդարձակ, համապարփակ համակարգ: Նրանք /ոչ մահմեդականները/ պաշտոնապես հայտարարվել էին անլիարժեք մարդիկ կամ ժողովուրդներ, որոնք պարտավոր էին ամեն բանում զիջել մուսուլմաններին», - գրում է Ինճիկյանը: Այսպես այլամերժումը դառնում է թուրք մարդկանց, թուրք հասարակության հոգեբանական, թերևս, ամենահիմնական գիծը: Այստեղից էլ չարիք ու ոճիր գործելու բնավորությունը, որ ունեցավ իր հրեշավոր դրսևորումները:

«Ցեղասպանության նախապատրաստման թուրքական մեթոդները» դրվագի համար Ինճիկյանը բնաբան է ընտրել Ժակ դը Մորգանի բնութագրիչ խոսքերը. «Ամեն ինչ նախատեսված էր. զոհերի զինաթափումը, դիմադրություն ցույց տալու ընդունակ երիտասարդության հեռացումը, զանգվածային տեղահանությունը և նրանց տանջանքների ենթարկելը. տղամարդկանց ոչնչացումը տեղահանության ճանապարհին...»:

Այս դրվագը ըստ էության Մորգանի տողերի ընդարձակ բացատրությունն է կոնկրետ օրինակներով, վավերագրական փաստաթղթերով, հավաստի աղբյուրների վկայաբերումով: Դեռևս 1879թ. մեծ վեզիր Քյամիլ փաշան հայտարարել է, որ հարկավոր է անհապաղ վերջ տալ հայերին, որ Հայաստան անունն անգամ չլսվի և դրա համար «ամեն գործիք պատրաստ ունինք՝ քրտերը, չերքեզները, կուսակալները, դատավորները, հարկահանները, ոստիկանները, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ մը կհայտարարենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվոր, ոչ պաշտպան...»:

Հեղինակը այնուհետև հանգամանորեն անդրադարձել է հետագա

ալցուդարձերին՝ սկսած Սուլթան Համիդի օրերից մինչև 1915-ի ցեղասպանությունը, երիտթուրքական կառավարության նենգամիտ գաղտնի և բացահայտ որոշումներին, կազմակերպված զանգվածային կոտորածներին, շեշտելով հատկապես թուրք անհատի ու խուժանի հոգեբանական գործոնը, ոչ քրիստոնյա, մասնավորապես, հայերի հանդեպ տածած կույր ատելությունը:

«Անհատի և զանգվածների վարքագծի ու գործողությունների հոգեբանական վերլուծումը սոսկ բացատրում է, թե ինչպես էին նախապատրաստվել և ինչպես էին տեղի ունեցել կոտորածները, ջարդերը» - գրում է հեղինակը: «Հայասպանություն» դրվագի համար Ինճիկյանը բնաբան է ընտրել Լեփսիուսի հետևյալ խոսքերը. «Ի՞նչ է կոտորածը Հայաստանում: Դա Բարձր Դռան կողմից ձեռնարկված վարչական միջոց է, որի միակ դրդապատճառն ու նպատակն է բարեփոխումների լիակատար մերժումը հայ ազգի բնաջնջման միջոցով»: Շարադրված է հայերին իսպառ բնաջնջելու այն վայրագ միջոցներն ու եղանակները, որոնք զարմանալի հմտությամբ գործի դրեցին թուրք իշխանավորները: Նախ՝ ազատեցին պաշտոններ ունեցող հայերին, կտրեցին հայության լուսավոր գլուխները, ձերբակալեցին ու աքսորեցին հարյուրավոր մտավորականների, գրողների, բժիշկների, հրատարակիչների, երևելի մարդկանց, սպանեցին նրանց գաղթի ճանապարհին, հափշտակեցին տեղահան հայության ունեցվածքը: Ապա՝ զորակոչելով հայ տղամարդկանց ու երիտասարդներին, զինաթափեցին ու գնդակահարեցին: Ավերեցին եկեղեցիներն ու վանքերը, ոչնչացրին նյութական ու հոգևոր արժեքները, հոգևորականներից շատերին տանջամահ արեցին մոլեռանդ խուժանի ձեռքերով: Հեղինակը շարադրում է հայասպանության իրականացման ընթացքը բավական մանրամասն, այն գազանությունները, որոնք մատչելի չեն նույնիսկ երևակայությանը: Ու բնավ պատահական չէ, որ Հանրի Բարբյուսը գրել է. «Եթե բաժանենք գլուխների այն ողբերգությունները, որոնք իր գոյության ընթացքում ապրել է մարդկությունը, ապա նրանցից ամենասարսափելին անպայման հայ ժողովրդի մարտիրոսությունն է»:

Այնուհետև հեղինակը քննության է առել մեծ տերությունների դիրքորոշումները Հայկական հարցում, որոնց շնորհիվ Թուրքիան գործել է շատ ավելի անկաշկանդ:

Վերջին՝ «Պատմությունը կրկնվում է» դրվագի համար Հ.Ինճիկյանը բնաբան է ընտրել Ցիցերոնի հայտնի խոսքերը՝ «Անպատժելիությունը

հանցագործության մեծագույն խրախուսանքն է»:

Այս դրվագում հեղինակն անդրադարձել է 1918-1920թթ. Արևելահայաստանում և Ղարաբաղում տիրող իրավիճակին, Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության հայաջինջ քաղաքականությանը, որին նպաստում էին անգլիական զինյալ ուժերը: Դա իրոք Թուրքիայի 1915-ի հայաջինջ քաղաքականության կրկնությունն էր: Հ.Ինճիկյանը նկարագրել է դեպքերի ընթացքը, անդրադառնալով 1917-ի դեպտեմբերի 5-ի ռուս-թուրքական նահանջին, թուրքական բանակի արշավանքներին, Բրեստ-լիտովսկու պայմանագրին և այլն:

Միակ պետությունը, որ կարող էր գործել ի նպաստ հայաստանի, Ռուսաստանն էր: Սակայն, ինչպես ակնարկում է հեղինակը, - «հանրապետության ղեկավարների շրջանում միասնություն չի եղել այդ հարցերը լուծելիս, ուստի Չիչերինի, Կարախանի, Լեգրանի ջանքերը՝ ի նպաստ Հայաստանի, անցել են ապարդյուն»:

Հեղինակը գտնում է, որ անպատժելիությունն էր, որ հնարավոր դարձրեց մերօրյա հայկական կոտորածները Սումգայիթում, Գանձակում, Բաքվում՝ բոլոր այն եղանակներով, որպիսիք գործադրեցին երիտթուրքերը 1915-ին:

Մ.Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հայոց 1915-16 թվականների ցեղասպանությունը հայ պատմագրության մեջ (Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման սեղմագիր) Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ., 1996

Սույն ուսումնասիրության հեղինակը հանրագումարի է բերել հայոց մեծ եղեռնի պատմության բնագավառում հայ պատմագրության մեջ մինչև այժմ կատարված մեծածավալ ու շնորհակալ աշխատանքը, համակողմանիորեն պատմաքննական վերլուծության ենթարկել ցեղասպանությանը նվիրված աշխատությունները, գիտական արժեք ներկայացնող հուշագրություններն ու հրապարակումները: